

Ա. Ա. ԲՈՉՈՅԱՆ**Պատմական գիտությունների դոկտոր****ՀՌՈՄԻ ՊԱՊ ԻՆՆՈԿԵՆՏԻՈՍ Բ-Ի ԹՈՒՂԹԸ՝****ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ****ԳՐԻԳՈՐ Գ ՊԱՀԼԱՎՈՒՆՈՒՆ**

Ամենայն Հայոց կաթողիկոսարանն իր երկարատև պատմության ընթացքում բազմաթիվ շփումներ է ունեցել Տիեզերական Եկեղեցու տարբեր թեմական Աթոռների առաջնորդների և պատրիարքարանների հետ: Սակայն պետական և եկեղեցական արխիվների չգոյության, ժամանակի ընթացքում օտար նվաճողների կողմից դրանց ոչնչացման պատճառով, պատմաբանների ուսումնասիրության համար մնացել են հատուկեմտ վավերագրեր, որոնց մշամակալի մասը պատճեններ են, ընդօրինակված ձեռագիր մատյաններում, միջնադարյան մատենագրության այլ ժանրերի երկերի հետ կողք կողքի: Այդ է պատճառը, որ միջեկեղեցական փոխհարաբերությունների մի չմչիմ մասն է միայն հաստատագրված վավերագրերով, որոնք փոխանակված են տարբեր եկեղեցական կազմակերպությունների առաջնորդների և ներկայացուցիչների միջև: Այդ վավերագրերի բազմակողմանի ուսումնասիրությունն էլ այսօրվա հայագիտության կարևորագույն խնդիրներից է:

Չմայած Հռոմի պապական արխիվները միմյև մեր օրերն են հասել նվազագույն կորուստներով, այնուամենայնիվ մի շարք վավերագրեր, որոնք պահպանվել են մեր մատենագրության մեջ, դեռևս հայտնաբերված չեն Հռոմի արխիվների խնամյալ պահոցներում: Այդ իմաստով բացառություն չեն կազմում Հռոմի պապության հետ Հայոց կաթողիկոսարանի փոխհարաբերությունների վավերագրերը, որոնք սկսած ԺԲ դարից ավելի ու ավելի հոծ են դառնում կապված խաչակրաց շարժման դրսևորումների և Արևելքում Հռոմի եկեղեցական կառույցների կազմակերպման հետ: Այս առումով մշամակալի ժամանակաբաժան է ԺԱ դարի 90-ական թթ. վերջը, որից հետո Հռոմի պապությունը իր հովանավորության տակ առավ Մերձավոր Արևելքում ստեղծված խաչակրաց պետությունները և սեփական պատրիարքական, արքեպիսկոպոսական և եպիսկոպոսական Աթոռները հաստատեց Երուսաղեմում, Ամտիոքում, Տրիպոլիում, Սուրում (Տիրոս), Եդեսիայում, Տարսոնում և այլուր¹:

Ի հարկե հայագիտական գրականության մեջ երբեմն արծարծվել և մի շարք միջնադարյան բնագրերում էլ վկայություններ են պահպանվել, որ Հայոց Եկեղեցին Հռոմի պապության հետ փոխհարաբերություններ է

¹ Ավելի մանրամասն տե՛ս Cl. Cahen, La Syrie du Nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche, Paris, 1940, p. 309 - 326:

Ռաստատել և վավերագրեր է փոխանակել ավելի վաղ ժամանակներից², սակայն Ռայներեն լեզվով պահպանված Հոռմի պապերի առաջին վավերական և մի շարք պարամետրերով պատմագիտական քննությունը բռնող նամակը պատկանում է Ինոկենտիոս Բ-ին (1130-1143) և ուղղված է Հայոց Կաթողիկոս Գրիգոր Գ Պառլավունուն (1113-1166)³: Այս վավերագրի նշանակությունը չափազանց մեծ է ոչ միայն Հայոց Եկեղեցու պատմական անցյալի ուսումնասիրության ու Ռայագիտության, այլ նաև կաթոլիկ Եկեղեցու պատմության և մեզ հասած վավերագիտական ժառանգության ուսումնասիրության ասպարեզում⁴: Պետք է նշել, որ գիտությանը դեռևս հայտնի չէ այդ վավերագրի լատիներեն թմազիրը: Այն մեզ է հասել ԺԲ դարի Ռայներեն թարգմանությամբ և մինչև այսօր ունեցել է միայն մեկ հրատարակություն, որն էլ, ցավոք սրտի, հաճախ չի արժանացել ուսումնասիրողների ուշադրությանը: Ամհրաժեշտ է նշել, որ այս թմազիրը մինչև վերջերս չէր թարգմանվել որևէ օտար լեզվով⁵:

² Այդ փոխարարությունների շուրջ մի շարք լատինալեզու վավերագրեր են հրապարակվել դեռևս ԺԷ դարում, թեթիմյան կրոնավոր Կղեմես Գալանոսի կողմից (նկատի ունեն Գրիգոր Է Պապի դարաշրջանի վավերագրերը): Այս վավերագրերի նորովի հրատարակությունը, Ռայներեն թարգմանությունը և ուսումնասիրությունը վերջերս հայագետների դատին հաճձնեց Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, հայր Պողոս Անանյանը (տե՛ս Գրիգորիս Վկայասեր և հայ հոռմեական յարաբերությունները, Բազմավեպ, 1992, էջ 7-30):

Ավելի վաղ գրված փաստաթղթերից մեկի վրա ևս վերջերս հայագետների ուշադրությունը հրավիրեց Ռ. Պողոս Անանյանը (տե՛ս Զաքարիա Հայոց Կաթողիկոսի եւ Աշոտ իշխանաց իշխանի թղթակցությունը Փոտ Պատրիարքի եւ Նիկողայոս Ա Պապի հետ, Վենետիկ, 1992, էջ 80 - 93):

Այնուամենայնիվ, պետք է ասել, որ մինչև ԺԲ դարը Հոռմի հետ փոխարարությունների ուսումնասիրությունը դեռևս կարոտ է վավերագիտական համակողմանի քննության: Հոգվածն արդեն հաճձման էր հրատարակության, երբ ջնդրակալությամբ ստացանք P. Halfer, Das Papsttum und die armenier im frühen und hohen Mittelalter: Von den ersten Kontakten bis zur Fixierung der Kirchenunion im Jahre 1198, Köln-Weimar-Wien 1996 աշխատությունը, որին մասնավոր գրախոսություն ենք մվիրել «Էջմիածին» ամսագրի 1996 թ. վերջին համարում: Չնայած Պ. Հալֆտերի աշխատանքն այս առումով բավական ուշագրավ է, սակայն այն ևս դեռևս պատասխան չի տալիս պատմա-բանասիրական մի շարք խնդիրների: Այդ իսկ պատճառով, այս հարցի ուսումնասիրողից, ըստ իս, պահանջվում է, Քրիստոնեական Արևելքի պատմության և բանասիրության բավական խորը և լայն պատրաստություն:

³ Մեզ չի հասել, քիչ ավելի վաղ գրված, Ոմորիոս Բ Պապի (1124-1130) նամակը, որի մասին վկայություն է պահպանել ԺԴ դարի ունիթոր հեղինակ Մխիթար Ապարանեցիին (տե՛ս Ղ. Ալիշան, Օմորիայի եւ պարագայ իւր, Վենետիկ 1873, էջ 171 - 172, հմտ. Պ. Անանյան, Ներսես Օմորիայի. Միջնկեղեցական յարաբերություններ, Բազմավեպ, 1996, էջ 203 - 204):

⁴ Այս վավերագիրը վերևում վկայակոչված աշխատանքում վերստին հրապարակել է Պ. Անանյանը (տե՛ս ծան. 3):

⁵ Պ. Անանյանի հոդվածի վերջում (Բազմավեպ, 1996) նամակն իտալերեն է թարգմանել պրոֆ. Գաբրիելա Ուլոմոչյանը: Ողջունելի է, որ Պիտեր Հալֆտերը և Անդրեա Օմիդյոնը ևս պատրաստվում են հետազոտել Ինոկենտիոս Բ-ի թուղթը և հրապարակել գերմաներեն թարգմանությամբ:

Իճնոկեմտիոս Բ-ի գահակալության տարիներին Հայոց Եկեղեցու և Հռոմի պապության պաշտոնական փոխհարաբերությունների մասին մեզ հասած առաջին վկայությունները պատկանում են լատին, հայ և հակոբիկ ասորական պատմագրությանը: Այդ տեսանկյունից առաջնակարգ են Վիլիելմ Սուրացու (Գիյոմ Տիրացի) Տարեգրության⁶ և Միքայել Ասորու ժամանակագրության մեջ պահպանված վկայությունները⁷, որոնք վերաբերում են Արևելքում Պապի լեզատ (նվիրակ) Ալբերիկ Օստիացու գործունեությանը⁸:

Անդրադառնալով մեզ հետաքրքրող մասակը հիշատակող առաջին տեղեկությունների քննարկմանը, պատմաբանասիրական եզրահանգումների և սկզբնաղբյուրների տեսությանը: Վավերագիրն անվանապես հիշատակող առաջին տեղեկությունը պատկանում է Ներսես Լամբրոնացուն, որը վավերագրի գրման հանգամանքների մասին տեղեկացնում է թղթին կցած հիշատակարանում⁹: Ըստ այդ վկայության, մեզ հետաքրքրող մասակը գրվել և ուղարկվել է «Աղպրի լեկաթի», նույն՝ Ալբերիկոս Օստիացի եպիսկոպոսի Հռոմ վերադառնալուց հետո¹⁰: Այդ վավերագիրը պատասխանն է Գրիգոր Գ Պաթլավունի Կաթողիկոսի մասակի, որի բնագիրը մեզ չի հասել¹¹:

Հայ մատենագրության մեջ պահպանված հաջորդ վկայությունը ևս ամենայն հավանականությամբ հասնում է մինչև Ներսես Լամբրոնացու ժամանակները: Հայագիտական գրականության մեջ այժմ նրան է վերագրվում կաթողիկոսական Գավազանացանկի այն խմբագրության

⁶ St'u Guillaume de Tyr, Chronique, édition critique par R. B. C. Huygens, Turnholt 1986, p. 699-700

⁷ Միքայել Ասորու ժամանակագրության մեջ հետաքրքրող հատվածը լայնորեն օգտագործված պետք է լիներ մաս ԺԳ դարում ապրի հակոբիկյան Եկեղեցու միաբան Գրիգոր Արույ Ֆարաջի (կամ Բար Երեմու) եկեղեցական պատմության մեջ, որի բնագիրը կամ թարգմանությունը, ցավոք, ձեռքի տակ չունենք:

⁸ Այդ մասին տե՛ս Recueil des Historiens Croisades, Historiens occidentaux, t. I, vol. 2, p. 687, Chronique de Michel le Syrien ... / Édité pour la première fois et traduite en français par J.-B. Chabot, t. III, Paris 1905, p. 255 - 256: Հիշատակված փոխհարաբերությունների մասին արձագանքել է մաս ԺԲ դարի ժամանակագիր Սամուել Ամեցին (տե՛ս Սամուելի քառամայի Ամեցյոյ Հուանքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչև ի մերկայս, ծայրաքաղ արարեալ, Յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելումսնեղով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 122 - 123):

⁹ Այս հիշատակարանի մասին ավելի հանգամանալի տե՛ս Թղթի գրման թվականը հատվածում (Հմտ. մաս ՄԲ-1026, էջ 231ա):

¹⁰ Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր թիւ 1026, թ. 231: Հմտ. Ն. Ալիքեան, Ներսես Լամբրոնացի, արքեպիսկոպոս Տառնոնի, կեանքն եւ գրական վաստակները հանդերձ ազգաբանութեամբ Պաթլավունաց եւ Լամբրոնի Հեթմեանց, Վիեննա, 1856, էջ 296 - 297:

¹¹ Այդ մասին տե՛ս մասակի բնագրում առկա համապատասխան վկայությունը. «Լուաք գուղղափառ հաւատս ձեր ի գրոյս, զոր եքեր Աղպրի արքեպիսկոպոս Ասատոյ զոր իբրեւ ընթերցաք...» (ընդգծումներն իմն են- Ա. Բ.):

նախօրինակը, որը մոր հավելումներով ընդօրինակվել է Աղանայի ժողովից հետո¹²: Այստեղ պահպանված վկայությունն առաջին անգամ գիտական շրջամատության մեջ է դրել թեաթինյան կրոնավոր կղեմես Գալանոսը, որը յուրաքանչյուր Հայոց Կաթողիկոսի գործունեության մասին խոսելիս նախ բերում է տվյալ Հայրապետի մասին ԺԴ դարում խմբագրված կաթողիկոսական ցանկի համապատասխան հատվածը, որ Գրիգոր Գ Պահլավունուն վերաբերող մասում կարդում ենք. «Առ սա Գրիգոր Գ Պահլավունի - Ա. Բ.) Պապն Հոովմայ գրեաց թուղթ. և խնդրեաց կատարել զսոց ծննդեանն և զմկրտութեանն և արկանել ջուր ի սուրբ խորհուրդն, որպէս և առնէ սուրբ Եկեղեցին Հոովմայ, և ամենայն ազգ քրիստոնէից: Եւ առաջ քան զսա իննոկենտիս Բ Պապն զնոյնս գրեաց, եւ եցոյց հարկատր»¹³:

Այս խնդրին վերաբերող հաջորդ վկայությունը գիտական շրջանառության մեջ դնելու պատիվը ևս պատկանում է բազմապատասխան մխիթարյան հայագետ Ռ. Ղ. Ալիշանին, որը գրում է. «յամին 1141, ինչպէս նշանակէ մեծանուն վարդապետն Եսայի Նչեցի. «/Ի/նոկենտիս Պապն Հոովմայ, որ էր ի հինգ հարիւր և յիննսուն թուին Հայոց». և որ անելի փափագելին էր մեզի կ'անելցընէ Եսայի թէ իր ատեն՝ յետ իբր 160 կամ քիչ մ'անելի ամաց՝ «ունիմք այսօր ի միջի մերում զԵնդիրն /Պապին/ հանդերձ Պատասխանական բանի», Գրիգորիսի և Ներսիսի. զոր մեք հիմայ գրողքս՝ դժբախտաբար ոչ ունիմք»¹⁴: Հետաքրքիր է այն փաստը, որ, ըստ Ղ. Ալիշանի, Եսայի Նչեցին այս ուսումնասիրության մյուս

¹² Տե՛ս Յ. Վարդանյան, Ներսես Պալիանենցիի վերագրվող ժամանակագրական մի ցանկի մասին, Պատմա-քանասիրական հանդես, 1980, 3, էջ 201:

¹³ Տե՛ս Մխիթարյանի Հայոց սուրբ Եկեղեցուն ընդ մեծի սուրբ Եկեղեցուն Հոովմայ. շարադրեալ ի յերկուս հատորս. ի պատմական և վիճարանական ի կարգէ թեալիմոսաց կղեմես վարդապետէ, Առաջին հատոր, Հոովմ, 1650, էջ 234: Այս մույն վկայությունը Մխիթար Ապարանեցու խմբագրությամբ է մեջբերում Ղ. Ալիշանը: Այստեղ իննոկենտիս Բ-ի անունից առաջ եղած «եւ առաջ քան զսա» դարձվածքը փոխված է «եւ յետ սորա» քառակապակցությամբ: Այս խմբագրությունը լրիվ փոխում է նախադասության իմաստը և թույլ է տալիս եմթադրել, որ իննոկենտիս Բ-ից առաջ զահակյան Հոովմ Պապն էլ է մամակ ուղարկել Հայոց Գրիգոր Գ Կաթողիկոսին (տե՛ս Ղ. Ալիշան, Ծնորհայի եւ պարագայ իր, Վեմետիկ, 1873, էջ 171 - 172): Հիմնվելով այս վկայության վրա Ղ. Ալիշանը եզրակացնում է. «Իննոկենտիսի նախորդն է Ոնորիս Բ Պապը, որ քահանայապետեց յամս 1124 - 30. ըսել է որ այս միջոցին առաջին անգամ թղթակցություն եղած է այս կրօնական և ծիսական խնդրի վրայ, զոր առաջ և ետև ամեն Հոովմայ հայրապետը ալ առաջարկած են Հայոց...» (տե՛ս մույն տեղում, էջ 172, հիմն. մակ L. B. Zekian, *Le colonie Armene del medio evo in Italia e le relazioni culturali Italo-Armene* (Materiali per la Storia degli Armeni in Italia). - Atti del primo simposio internazionale di arte Armena (Bergamo, 22-30 giugno 1975), San Lazzaro-Venezia 1978, p. 848): Պետք է այստեղ մշել, որ միմյն այսօր Ոնորիս Բ Պապի անվան հետ կապված որևէ թղթակցություն, որն առաջված լիներ Հայոց կաթողիկոսներին կամ Եկեղեցուն, հայտնի չէ հայագիտությանը: Սակայն չեն կարող որևէ եմթադրություն անել, քանի որ ձեռքի տակ չունեն Մխիթար Ապարանեցու երկի բնագիրը:

¹⁴ Տե՛ս Ղ. Ալիշան, մույն տեղում, էջ 172 (հիմն. մակ L. B. Zekian, *La colonie...* p. 848-849): Պիտի մշեմ, որ երկար պրպտումներից հետո եւ կարողացա գտնել Եսայի Նչեցու այն

դարձած թուղթը թվագրում է Հայոց 590, այսինքն՝ Բրիստոսից հետո 1141/2 թվականով¹⁵:

Թղթի ամբողջական բնագիրը գիտական շրջանառության մեջ է դրվել միայն 1893 թ., վաղամեծիկ հայագետ¹⁶, էջմիածնի ճեմարանի ուսուցիչ Արշակ Տեր-Միքելյանի կողմից¹⁷, որին հայագիտությունը պարտական է բազմաթիվ նորահայտ բնագրերի հայտնաբերման, ուսումնասիրության և հրապարակման համար: Տարօրինակ է, որ թղթի հրապարակումից հետո անցած հարյուր տարվա ընթացքում ո՛չ Ֆ. Թուրնեբիզը և ո՛չ էլ Մաղաքիա Պատրիարք Օրմանյանն ու Ռ. Լ. Ս. Կոզյանը չեն ակնարկում անգամ այդ մամակի գոյության փաստը: Վավերագրի հրապարակված բնագիրը վրիպել է նաև Ժերար Դեդեյանի ուշադրությունից¹⁸:

Ինքնուկենտիս Բ-ի թղթի մեզ հայտնի ձեռագրերը երկուսն են, որոնք պահպանվում են Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում:

ա) դրանցից հնագույնը ՄՄ-500 մատյանն¹⁹ է, որից էլ «Արարատ»-ում մեզ հետաքրքրող թուղթը հրապարակել է Արշակ Տեր-Միքելյանը: Այս ձեռագիրը, Գրիգոր Է Ամավարզեցի (1293 - 1307) Կաթողիկոսի մեկենասությամբ, ընդօրինակել է վարդան Գրիչը: Այս մատյանը, իր մվիրակ Կեսարիայի Կոստանդին արքեպիսկոպոսի ձեռքով, 1305 թ. Եսայի Նչեցի վարդապետին է մվիրել մեկենաս-Կաթողիկոսը: «Տեր Գրիգորիս ծառայ Աստուծոյ եւ ողորմութեամբ նորին Կաթողիկ[ոս] Ամենայն Հայոց»:

երկի բնագիրը, որից զգույն է մխթարյան հայագետը: Այդ երկի ընդօրինակություններից մեկը պահպանվում է Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի թ. 573 ձեռագրում:

¹⁵ Պիտի մշեմ, որ Եսայի Նչեցու երկի վերևում ճիշտակված ընդօրինակությունը չի հաստատում Դ. Ալիշանի վկայությունը: ՄՄ - 573-ում ինքնուկենտիս Գ-ի թուղթը թվագրված է Հայոց ՇՁ (=580), այն է 1131 թ. (տե՛ս թղ. 320ա): Հետևապես մեզ մնում է ենթադրել, որ Դ. Ալիշանը զգույն է Ս. Ղազարի Մատենադարանի մեզ անծանոթ մի ձեռագրից:

¹⁶ Նա եղել է, հետագայում Կ.Պոլսի պատրարք դարձած, Մաղաքիա Պատրիարք Օրմանյանի տանը: ԺԹ դարի վերջին և Ի դարի սկզբին վաղարշապատում հայագիտական դպրոցի ստեղծման մեջ անգնահատելի է Մաղաքիա Օրմանյանի դերը, որը բավական կարճ ժամանակով դասավանդելով Գևորգյան ճեմարանում, կարողացավ ստեղծել հայագիտական մի դպրոց, որի ավանդների շարունակողները դարձան Ա. Տեր-Միքելյանը, Գ. Տեր-Մկրտչյանը, Կ. Տեր-Մկրտչյանը, Ե. Տեր-Մինասյանը, Գ. Հովսեփյանը և ուրիշներ:

¹⁷ Տե՛ս Ա. Տեր-Միքելյան, Միջին դարերի կաթողիկոսների ձգտումներն էկեղեցական խաղաղության համար, «Արարատ», 1893, էջ 133 - 138:

¹⁸ G. Dédeyan, Le rôle complémentaire des frères Pahlawuni Grigor III. Catholikos, et saint Nersès Siorhali, coadjuteur, dans le rapprochement avec les latines, à l'époque de la chute d'Édessa (v.1139 - v.1150).- Revue des Études Arméniennes, N.S., t. XXIII(1992), p. 237 -251. Ժ. Դեդեյանի աչքից վրիպել է նաև այդ մամակին վերաբերող Լ. Զեքիեանի անդրադարձը (տե՛ս (Nersès de Lambron", in: Dictionnaire de Spiritualité, t. XI, p. 136, ltrd> ից [Լ. B. Zekiyan, Le colonie..., p. 848-849):

¹⁹ Ձեռագրի համառոտ նկարագրությունը տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Ա /Կազմեցին՝ Օ. Եզանյան, Ա. Զեքյունյան, Փ. Անթարյան, Երևան, 1985 (այսուհետև՝ ՃՁՄՄ):

ընձանցի զգիրքս Եսայի վարդապետին ի ձեռն մեր հաւատարիմ լիկաթին Տէր Կոստանդէ արքեպիսկոպոսին Կեսարու. առաքեալ յարեւելս ի թվիս 207-ի²⁰: Ձեռագրում տեղ եմ գտել բազմաթիվ արժեքավոր թղթեր, որոնց մի նշանակալի մասը հրապարակել է Ա. Տեր-Միքելյանը²¹:

բ) սյուս մատյանն այժմ կրում է ՄՄ - 1026 համարը²²: Ձեռագիրը Ռ. Ն. Ակիմյանի ու Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի համառոտ ձեռագրացուցակի այս բաժնի հեղինակ, երջանկահիշատակ Օ. Եզանյանի կողմից թվագրվում է ԺԻ դարով: Մատյանում ընդօրինակված է Ներսես Լամբրոնացու կողմից լատիներենից թարգմանված Հոռմի Եկեղեցու ծիսարանը, որին համապատասխանող լատիներեն բնագիրը դեռևս հայտնի չէ այս բնագավառի հետազոտողներին²³: Ձեռագրում պահպանված նյութերի մեջ ուրույն հետաքրքրություն եմ ներկայացնում նաև Հոռմի Պապեր Լուկիոս Գ-ի (1182 - 1185)²⁴ և Կղեմես Գ-ի (1187 - 1191)²⁵ նամակները: Այստեղ պետք է հատկապես մատնանշել այն փաստը, որ ՄՄ-1026 մատյանի նախագաղափար օրինակը արտագրվել է Ներսես Լամբրոնացու կազմած և ընդօրինակության տված ժողովածուից, որի մասին վկայում են մեզ հասած ձեռագրում պահպանված մի քանի արժեքավոր հիշատակագրություններն ու հիշատակարանը, սակայն ՄՄ-1026 ձեռագրի արտագրության ժամանակ, իմ կարծիքով, այդ նախօրինակն արդեն ունեցել է որոշ թերիներ, իսկ պրակներից մի քանիսն ամենայն հավանականությամբ տեղաշարժված են եղել²⁶: Ներսես Լամբրոնացին այս մատյանում հավաքել է ԺԲ դարում Հոռմի պապության հետ Հայոց Եկեղեցու փոխհարաբերությունների իրեն ծանոթ վավերագրերը: Իմ կարծիքով, մեզ չհասած Ներսես Լամբրոնացու ընդօրինակությունից է արտագրված ՄՄ-500 մատյանում մեզ հետաքրքրող թուղթը: Ինձոկենսիոս Բ-ի նամակը ՄՄ-1026 մատյանում զբաղեցնում է 221բ-231ա էջերը:

Թղթի գրման թվականը. Հոռմում գրված և միայն հայերեն թարգմանությամբ պահպանված պաշտոնական նամակի թվագրումը կապված է մի շարք դժվարությունների հետ, չնայած ձեռագիր մատյանում վավերագիրը թվագրված է մի քանի անգամ: Առաջին թվագրումը տրված է թղթի վերնագրում. «Թուղթ որ բերաւ ի Հոռմէ առ Գրիգորիոս

²⁰ ՄՄ - 500, թղ. 380բ:

²¹ Տե՛ս նրա վերևում հիշատակված հոդվածաշարը (հմտ. ծան. 17):

²² Ձեռագրի համառոտ նկարագրությունը տե՛ս ՑԶՄՄ, սյուն 461: Մեզ հետաքրքրող մատյանում պահպանված բնագրերին շատ ավելի մանրամասն ամփոփարկել է Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Ռ. Ներսես Ակիմյանը (տե՛ս նրա Ներսես Լամբրոնացի, Վիեննա 1956, էջ 296 - 313):

²³ Տե՛ս Ն. Ակիմյան, Նշվ. աշխ., էջ 307 - 308:

²⁴ Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, թիվ 1026, թղ. 170բ - 177բ:

²⁵ Նույն տեղում, թղ. 213 - 218:

²⁶ Ձեռագիր այս մատյանն արժանի է ավելի հանգամանալի ձեռագրագիտական և բնագրագիտական քննության:

Կաթողիկոսն, որ նախ էր ի թուակ/անիզ/. ՇՁ(= 1131/2)»: Վերնագիրը, թերևս, ավելացված է այն ժամանակ միայն, երբ նախկը հասել է Հայոց Կաթողիկոսին և թարգմանվել է հայերեն: Ամենայն հավանականությամբ վերնագիրը գրված է կա՛մ Հայոց Կաթողիկոսարանի նոտարական գրասենյակում թարգմանությունը գրանցելիս, կա՛մ էլ Ներսես Լամբրոնացու կողմից խմբագրվել է ավելի ուշ, երբ վերջինս կազմում էր մեզ հետաքրքրող ձեռագիր ժողովածուն (ՄՄ-1026-ի նախատիպը), այսինքն՝ ԺԲ դարի 90-ական թվականներին: Ինչ ավելի հավանական է թվում երկրորդ վարկածը, թեպետ նամակի թարգմանությունը, կարծում եմ, ամենայն հավանականությամբ պատկանում է Ներսես Գ Շնորհալուն²⁷ և վերաբերում է ԺԲ դարի 40-ական թվականներին: Ենթադրությամբ համար հիմք են ծառայում բոլոր այն նկարագրական վերնագրերը, որոնք ունեն Ներսես Լամբրոնացու կազմած «Պատճառ խնդրոյ միաբանութեան» ժողովածուի վավերագրերը²⁸:

Մյուս ժամանակագրական վկայությունը հաստատապես Ներսես Լամբրոնացունն է. «Ջալս թուղթ գտաք նախ քան զմեր ծնանելն յաստիս բերեալ առ տէրն (իմա՛ Գրիգոր Գ Պափյափունուն-Ա. Բ.) մեր մինչդեռ Միջագետք քրիստոնէից էր, և նա բնակէր ի ծով դղեակն, քանզի անդ լսեաք ի տղայութիւնն ի տէր Ներսեսէ թէ եկն Աղարի լեկաթն և խառնեցաւ ընդ նոսին. և գրոյն որ զկնի նորա առաքեցաւ պատասխանիս»²⁹:

Ըստ վերոբերյալ երկու ժամանակագրական վկայությունների, որոնցից առաջինն ամենայն հավանականությամբ, իսկ երկրորդը հաստատապես պատկանում են Ներսես Լամբրոնացու գրչին, տեղեկանում ենք, որ նախկը Հայոց Գրիգոր Գ Պափյափունի Կաթողիկոսին է հանձնվել:

ա) դեռևս այն ժամանակ, երբ Ներսես Լամբրոնացին դեռ ծնված էլ չի եղել, այսինքն՝ մինչև ԺԲ դարի 50-ական թվականները,

²⁷ Այս ենթադրության համար լավագույն ապացույց է այն, որ մեզ հետաքրքրող նամակում ինձոկենտիոս Բ-ը Ներսես Շնորհալուն գիտե որպես լատիներենին տիրապետող անձնավորություն, համենայն դեպս Պապին այդ մասին պատմել է Աղարի լեկաթը (տե՛ս ՄՄ-1026, թ. 230բ):

²⁸ Համեմատության համար բերենք միայն մի քանի քննող օրինակ.

- «Գիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ՝ գրեալ ի Ներսիսէ արքեպիսկոպոսէ, յեղծօրէ տեառն Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց, ի խնդրոյ գերապատիւ փեսայի ինքնակալ թագաւորին Հոռոմոց Մանուէլի՝ Ալէքսի մեծի պոստոստատոսի, յորժամ ել յարեւելս եւ էր ի Մամեստիա մայրաքաղաքին Կիլիկեցոց, ի թուակամութեան Հայոց՝ վեց հարիւր չորեքտասան» (տե՛ս Ընդհանրական թուղթը սրբոյն Ներսիսի Շնորհալոյ, Երուսաղէմ, 1871, էջ 87):

- «Թուղթ Գրիգորի Կաթողիկոսի Հայոց՝ որ զկնի տեառն Ներսիսի յաջորդեաց զաթոռն, առ քարեպաշտ թագաւորն Հոռոմոց Մանուէլ» (նույն տեղում, էջ 168):

- «Թուղթ քարեպաշտ թագաւորին Հոռոմոց Մանուէլի, գոր գրեաց պատասխանի Գրիգոր կաթողիկոսի Հայոց» (նույն տեղում, էջ 169):

Վավերագրերի վերնագրերի քննությունը տե՛ս Ա. Ա. Բոգդան, Հայ-բյուզանդական եկեղեցական քառակցությունների վավերագրերը (1165 - 1178), Երևան 1995, էջ 92 - 97:

²⁹ ՄՄ - 1026, թ. 231ա:

բ) Աղարի (Ալքերիկոս Օստիացի) լեկաթի հետ Գրիգոր Գ Պաթլավունու ու Ներսես Շնորհալու տեսակցությունից և առաջինի Հոռմ վերադառնալուց հետո,

գ) այն ժամանակ, երբ Գրիգոր Գ Կաթողիկոսը դեռևս բնակվում էր Մով դղյակում, իսկ Միջագետքը պատկանում էր քրիստոնյաներին³⁰,

դ) այսինքն՝ Հայոց ՇՁ (=1131/2) թվականին:

Զմայած վերոբերյալ ժամանակագրական պարամետրերը միմյանց չեն հակասում, սակայն կասկած է հարուցում չորրորդ՝ ամենակարևոր և ճշգրիտ թվացող մեկնակետը, մատնցույց արված թվականը: Այստեղ պետք է ճշել այն համգամանքը, որ խաչակիրները տարածքային ամենաառաջին և ամենամեծ կորուստը Միջագետքում ունեցան միայն 1144 թ., Եդեսիայի անկումից հետո և գ) կետը հուշում է, որ Ներսես Լամբրոնացիին մկատի ունի այդ իրադարձությանը ճախորդող առավել մոտ տարեթիվ:

Վերևում հիշատակված թվականը հակասում է նաև Եսայի Նչեցու օգտագործած թվականին, որը, ըստ Ղ. Ալիշանի, 1141-ն է³¹: Բայց այստեղ մեր առջև ծառանում է մեկ այլ խնդիր ևս: Քանի որ Եսայի Նչեցու հիշյալ երկի բնագրի Ղ. Ալիշանի օգտագործած ընդօրինակությունը ինձ հայտնի չէ, կարող եմ ենթադրել.

ա) թվականի սրբագրումը կատարում է հ. Ղ. Ալիշանը³²,

բ) Եսայի Նչեցու ձեռքին եղել է այս թղթի մեկ այլ ընդօրինակություն, ուր այն թվագրված է եղել Հայոց ՇՂ, այսինքն՝ Քրիստոսից հետո. 1141/2 թվականով³³:

³⁰ Ամենայն հավանականությամբ Ներսես Լամբրոնացիին անհարկում է Զանգու կողմից Եդեսիայի գրավմանը ճախորդած ժամանակաշրջանը: Այսինքն՝ մի՞չն 1144 թ. դեկտեմբերի 23-ը (Եդեսիայի գրավմանը հաջորդած իրադարձությունների և կոմսության տարածքների մուսուլմանական պետությունների կողմից զավթման մասին տե՛ս Ա. Բոգոյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Երևան, 1988, էջ 153-163):

³¹ Այստեղ պետք է մկատի ունենալ, որ «Երջանիկ րաթունդն Եսայեայ ասացեալ. վասն դասնութեան հաւատոյ, ընդդէմ պարոմ Հեթոյ Կոռիկոսցոյն՝ պատասխանի թղթոյն» երկի ՄՄ-573 մատյանի ընդօրինակությունում ևս թուղթը թվագրված է Հայոց ՇՁ(=1131/2) թվականով (տե՛ս թղ. 320բ):

³² Ղևոնդ Ալիշանը կարող էր հետևել հայ մոր պատմագրության հիմնադիր Միքայել Զամչյանին, որը ինձնկենտիոս Բ Պապի մփրակ Ալքերիկոս արքեպիսկոպոս Օստիացու հավաքած Անտիոքի ժողովը, ուր քննվելու էր այդ քաղաքի արքեպիսկոպոս Հուստով փոսի ըմտությունը օրինակության հարցը, թվագրում է 1141 թվականով, թեպետ նաև ավելացնում է. «1143. և ըստ ոմանց 1136. որպէս է տեսանել ի մատենագրութիւն ժողովոց. հատոր ԺԱ. երես 506. և 583. ևն.» (տե՛ս Մ. Զամչյանց, Պատմութիւն Հայոց, հտ. Գ, էջ 53):

³³ Այս վարկածը փաստորեն դեռևս չի ապացուցվում Երևանի ՄՄ-500 ձեռագրով (տե՛ս թղ. 377ա-380բ): Զմայած այս ընդօրինակությամբ հայտնի է դառնում, որ Գրիգոր Անավարզեցի Կաթողիկոսը Եսայի Նչեցուն է ուղարկել նաև ինձնկենտիոս Բ-ի թղթի պատճենը, սակայն այս ընդօրինակության վերնագրում ևս նախկին թվագրված է Հայոց ՇՁ(=1131/2) թվականով: Որ այս ընդօրինակությունը եղել է Եսայի Նչեցու ձեռքին, վկայում է թղ. 380բ-ում պահպանված հիշատակագրությունը. «Տէր Գրիգորիս ծառայ

Քանի որ մենք որևէ հաստատուն փաստարկ չունենք պնդելու մեր առաջին ենթադրությունը, ապա ավելի հավանական ենք համարում, որ այդ սրբագրումը պատկանում է Ռ. Ղ. Ալիշանի օգտագործած սկզբնաղբյուրին, որը ինձ հայտնի չէ:

Աղպրի լեկաթը նույն ինքն ինքնակենսոյս Բ Պապի մկրտակ Օստիոյ (կամ Օստոյ) արքեպիսկոպոս Աղպրի-Ալեքսիկոսն է, որը, ըստ Վիլիսլեյ (կամ Օստոյ) արքեպիսկոպոս Աղպրի-Ալեքսիկոսն է, որը, ըստ Վիլիսլեյ Սուրացու, ժողովներ է հրավիրել Անտիոքում և Երուսաղեմում: Արևելքի կաթոլիկ եկեղեցական թեմերի վերևում հիշատակված երկրորդ ժողովին, ըստ սկզբնաղբյուրների վկայության, մասնակցել է նաև Հայոց Կաթողիկոս Գրիգոր Գ Պապիկոսը³⁴: Այս իրադարձությանն անդրադարձել է նաև ԺԲ դարի ասորի ժամանակագիր Միքայել Ասորին: Նա Պապի այս լեկաթի Մերձավոր Արևելք գալը թվագրում է Սելևկյան 1454 (=1142/3) թվականով³⁵: Մեզ հետաքրքրող Երուսաղեմի ժողովին, որին մասնակցել է նաև Հայոց Կաթողիկոսը, անդրադարձած այսօրվա հետազոտություններում, իրադարձությունը թվագրվում է, ըստ Ժերար Դեղեյանի, 1140 թ. ապրիլ ամսով³⁶, իսկ ըստ Ժան Ռիշարի՝ 1141 թվականով³⁷:

Աստուծոյ և ողորմութեամբ մորիմ կաթողիկոսն ամենայն Հայոց՝ ընծանցի գգիդքս Եսայի վարդապետին ի ձեռն մեր հաւատարիմ լիկառիմ տէր Կոստանդէ արքեպիսկոպոսին կեսարու, առաքեալ յարենքս ի թվիս :ՉՄԴ.:» (Ռմմ. Արարատ, 1893, էջ 238): Այս հիշատակարանը Պ. Ամանյանը ևս օգտագործում է, ապացուցելու համար, որ Եսայի Նչեցին ձեռքին ունեցել է ինքնակենսոյս Պապի մատակի բնագիրը, որով ավելի ճշգրիտ է թվագրել այն (տե՛ս Բազմալէպ, 1996, էջ 204, ծան. 10): Ամկասկած, Եսայի Նչեցին այս ըղբորմակությունը ունեցել է իր տրամադրության տակ, քանի որ ՄՄ-500 մատյանի վերջում պահպանվել է նաև Եսայի Նչեցու հիշատակագրությունը, որով վերջինս հավաստիացնում է. «Եսայի վարդապետին է գիրքս յաղագս որոյ միշտ յիշել աղաչեմ յողորմութիւնն Աստուծոյ» (թղ. 446ա): Այնուամենայնիվ, կարծում ենք, որ հնարավոր է, որ Եսայի Նչեցին ձեռքի տակ ունեցել է նաև այլ վկայություն, որի հիմամբ վրա էլ թվագրել է մեզ հետաքրքրող թուղթը Հայոց ՁԴ թվականով:

34 St'v. Joannes Dominicus Mansi, Sacrorum Conciliorum ..., Graz 1961³, vol. 21, columna 583-584, Ռմմ. նաև G. Dédeyan, ԳԶԼ. աշխ. Դ

35 St'v. Chronique de Michel le Syrien ..., t. III, p. 255; Ռմմ. Միքայել Ասորի, Ժամանակագրություն, Երուսաղեմ 1871, էջ ...:

36 St'v. G. Dédeyan, ԳԶԼ. աշխ., p. 241:

37 Jean Richard, La papauté et les missions d'Orient au Moyen Age (XII^e-XV^e siècles). - Roma, 1977 (Collection de l'école Française de Rome, 30), p. 10, n. 31.

Ըստ համադրատարանին տեղեկանքի, Աղպրի արքեպիսկոպոսը Մերձավոր Արևելքում է եղել մոտավորապես 1138 թ. դեկտեմբերից հետո, իսկ ըստ մեկ այլ պահպանված վկայության՝ 1145 թ. եղել է Ֆրանսիայում: Քանի որ մեզ հետաքրքրող թղթից հայտնի է, որ Հայոց Կաթողիկոսի և նրա շրջապատի մասին ինքնակենսոյս Բ-ն ամենամեր լսել է Աղպրի արքեպիսկոպոսից, ապա ամկասկած, մա Հոռոմ պիտի ժամանած լիցի միմյն ինքնակենսոյս Բ-ի մահը, այն է՝ ոչ ուշ, քան 1143 թ.: Աղպրի արքեպիսկոպոսը, ըստ նույն համադրատարանի, Մերձավոր Արևելքում ժողովներ է գումարել Անտիոքում և Երուսաղեմում (տե՛ս U. Rouziès, Alberic, cardinal-evêque d'Ostie. - Dictionnaire d'histoire et de géographie ecclésiastiques, t. I, Paris, 1912, p. 1408-1409):

Ծ.-Ժ. Հեֆելը և Հ. Լեկլերկը հետևյալ ժամանակագրությունն են տալիս Աղպրի Լեկաթի հրավիրած եկեղեցական երկու ժողովներին:

բանաձև և թվագրում, այսինքն այն քոյր բաղկացուցիչ տարրերը, որոնք պարտադիր են Հռոմի Պապի կողմից գրված այդ դարաշրջանի յուրաքանչյուր պաշտոնական նամակի: Այս վավերագրի թղթավերջն ու թղթառաջը գրեթե նույնամոտ են Լուկիոս Գ-ի և Կղեմես Գ-ի նամակների մեզ հասած հայերեն բնագրերի համապատասխան ձևակերպումների հետ:

Նամակի վավերականության հարցը. 1893 թ. Արշակ Տեր-Միքելյանի կողմից վավերագրի հրապարակումից հետո, որևէ մեկը կասկածի չի ենթարկել այս վավերագրի վավերականությունը, սակայն տարօրինակ է նաև այն փաստը, որ փաստաթուղթը մինչև վերջերս որևէ մեկը չի փորձել շրջանառության մեջ դնել⁴³: Ինչպես տեսանք, այս նամակի բնագիրը ժամանակին ծանոթ է եղել Ներսես Լամբրոնացուն, որի ժամանակներից է հասնում նաև օգտագործած ձեռագրի նախօրինակը: Ուրեմն՝ առանց վարանելու կարելի է պնդել, որ մեր ձեռքն է հասել Հռոմի Պապ Իննոկենտիոս Բ-ի թղթի Հռոմկլայի նոտարական գրասենյակում պահպանվող թարգմանության պատճենը: Պիտի հուսալ, որ Հռոմի պապական արխիվներում կատարվելիք հետազոտությունները թույլ կտան հայտնաբերել նաև այս թղթի լատիներեն բնագիրը⁴⁴:

Քննարկված հարցերը. Իննոկենտիոս Բ-ի նամակում կարելի է առանձնացնել երեք կարևոր ծիսադավանական հարց, որոնցից յուրաքանչյուրին Հայոց Եկեղեցին և նրա աստվածաբան գործիչները ժամանակ առ ժամանակ անդրադարձել են, սկսած Զ դարում սկիզբ առած մեր Եկեղեցու և քույր Եկեղեցիների միջև ծայր առած դավանաբանական վեճերի դարաշրջանից: Այս հարցերում ի տարբերություն քույր Եկեղեցիների դիրքորոշման, Հայոց Եկեղեցին իր ավանդույթը համարելով ավելի հին, փորձել է սկզբնաղբյուրների օգտագործմամբ ապացուցել սեփական մեկնակետի իրավացիությունը: Անդրադառնալով Հռոմի Պապ Իննոկենտիոս Բ-ի թղթում արծարծված հարցերին և ճանապարհորդության սահմաններում ցույց տալով Հայոց Եկեղեցու դիրքորոշումը դրանց նկատմամբ: Այդ հարցերն են.

ա) Հռոմի տեղը և դերը Տիեզերական Եկեղեցու նվիրապետական կառույցում,

⁴³ Այս թուղթը վերջերս համակողմանի քննության ենթարկեց և հայերեն բնագրով ու Գ. Ուլտմոջյանի իտալերեն թարգմանությամբ հրապարակեց Պ. Ամանյանը, տե՛ս վերևում, ծան. 3: Ինձ հասած տեղեկությունների համաձայն նամակի գերմաներեն թարգմանությունը ուսումնասիրությամբ հանդերձ պատրաստում են Պիտեր Հալֆտերը և Անդրեա Շմիդտը:

⁴⁴ Այս վավերագրի լատիներեն պատճենը գտնելու մեր քոյր փորձերը, գրականության պակասի պատճառով, անարդյունք են ավարտվել: Ամ-Կալկայի վանական, հայագետ Շառլ Ռոնուս ինձ տեղեկացրել է, որ այն արձանագրված չէ անգամ Յաֆեի կազմած պապական նամակների ցանկում (տե՛ս Jaffé Ph., Regesta Pontificum romanorum, ed. II curaverunt S. Loewenfeld, F. Kaltenbrunner, P. Ewald, I, Lipsiae 1881):

բ) Պատարագի գինում ջուր խառնելու հարցը:

գ) Զրիստոսի ծնունդը տոնելու օրվա խնդիրը:

Հատկանշանական է, որ ԺԲ դարում սկսելով փոխաբարությունները Հայոց եկեղեցու հետ, Հռոմի պապությունը առաջ է քաշում միայն այս երեք հարցերը: Հետագայում սրանց են միանում նաև մի շարք այլ խնդիրներ, իսկ ԺԴ դարում դրանց թիվն արդեն հասնում էր 117-ի⁴⁵:

ա) *Հռոմի տեղը և դերը Տիեզերական եկեղեցու նվիրապետական կառույցում*. Ինչպես ասացինք, Հայոց եկեղեցին մինչև ԺԲ դարը գրեթե չի շփվել Հռոմի պապական եկեղեցու հետ: Արևմուտքի հետ փոխաբարությունները իրականացվում էին Կոստանդնուպոլսի եկեղեցու միջնորդությամբ, որն իրեն համարում էր Հռոմի իրավահաջորդն ու ժառանգորդը և իր մայրաքաղաքն անվանում էր Նոր Հռոմ: Քաղկեդոնի ժողովից հետո Արևելքում առանձնացան մի շարք եկեղեցական կազմակերպություններ, որոնք չէին ընդունում այդ ժողովում ընդունված «երկու բնություն» ձևակերպումը: Բացի այդ, Կոստանդնուպոլսի պատրիարքությունը, սկսած Զ դարից, որդեգրեց մի քաղաքականություն, ըստ որի նրան պիտի ենթարկվեին Արևելքի բոլոր պատրիարքական Աթոռները և եկեղեցական թեմերը: Այդ քաղաքականությունը արաբական ռազմարշավներից հետո տվեց իր պտուղները: Մերձավոր Արևելքում հաստատվեցին Կոստանդնուպոլսի Օրթոդոքս եկեղեցուն ենթակա պատրիարքական թեմեր, սակայն դրանցից իրենց սեփական պատրիարքական Աթոռներով առանձնացան մի շարք եկեղեցական թեմեր, որոնց մեջ կարևորագույններից էր հակոբիկ եկեղեցին, որի երկու թևերի առաջնորդները շարունակում էին իրենց կոչել Ամսիոքի և Աղեքսանդրիայի պատրիարքներ, ի հեճուկս նույն վայրերի, Կոստանդնուպոլսին ենթակա մելկիտ պատրիարքների: ԺԲ դարում խաչակրաց Արևելքի երկրներում իրեն ենթակա թեմեր սկսեց հաստատել նաև Հռոմի եկեղեցին, որը հիմնականում սեփական թեմերը հաստատում էր Արևելքի քաղաքներից փնդելով Կոստանդնուպոլսի Օրթոդոքս եկեղեցուն հպատակ հոգևոր բարձրաստիճան պաշտոնյաներին⁴⁶: Այս հակամարտությանը անդրադառնում է ոչ միայն լատին և հույն պատմագրությունը, այլ նաև հայ, ասորի և արաբ պատմագրությունը:

ԺԲ դարում Հռոմը հսկայական միսիոներական գործունեություն սկսեց ծավալել Մերձավոր Արևելքում⁴⁷: Ահա այս ժամանակ է, որ Հայոց եկեղեցին առաջին անգամ ստիպված էր հստակեցնել իր դիրքորոշումը պապական Աթոռի նկատմամբ: Այս խնդրում, մեզ թվում է, երկրորդական դեր չի ունեցել նաև Իննուկենտիոս Բ-ի թուղթը, որը պահանջում էր

⁴⁵ Տե՛ս Յ. Ամասեան, Հայոց մոլորական համարումն զրքերն ըստ լատինական մի հիմնուցակի- Յ. Ամասեան, Մամր երկեր, Լոս Անջելես, 1987, էջ 303-317, հատկապես՝ 303-307:

⁴⁶ Cahen Cl., Նշվ. աշխ., էջ 309-326:

⁴⁷ Richard J., Նշվ. աշխ.:

անվերապաճորեն ընդունել Հոռմի Եկեղեցու գերագահությունը և անսխալականությունը, ու հնազանդ լինել Հոռմի Եկեղեցուն թուր եկեղեցական (նաև քաղաքական) հարցերում. «վասն զի Եկեղեցույս Հոռմայ տուաւ պարգել ի Քրիստոսէ, հաստատել զամենայն խախտեալ եկեղեցիս, մոլորեալ են որոշեալքն ի սմանէ, որք ոչ գամ զկմի ի վարդապետութեան սորա, քանզի որպէս մարմին հնազանդի զխոյ, նոյնպէս եւ ընթանոր Եկեղեցի որ է տաճար Քրիստոսի, հնազանդել պարտի սմա, որ զլուխ եկեղեցույ հաստատեցաւ ի Քրիստոսէ»⁴⁸:

ԺԲ դարի հայ մատենագրության մեջ առաջին անգամ Ներսես Շնորհալին է իր «Ողբ Եղեսիոյ» պոեմում, հիմնվելով հայ մատենագրական ավանդույթի վրա, առանձնակի անդրադառնում Երուսաղեմի, Հոռմի, Կոստանդնուպոլսի, Աղեքսանդրիայի և Անտիոքի պատրիարքական Աթոռներին⁴⁹:

Հոռմի պատրիարքական Աթոռին Ներսես Շնորհալին անդրադառնում է նաև Մանուել Կոմնենոսին ուղարկած թղթերից մեկում, գրելով. «Նա զի եւ լուաք՝ թէ [սուրբ եւ առաջին ամենայն եպիսկոպոսապետաց] Հայրապետն Հոռմայ, եւ փոխանորդն Պետրոսի առաքելոյ յիւրոց անտի իմաստնոց առաքեաց խօսել առաջի սուրբ թագաւորութեան ձերոյ վասն միաքանութեան»⁵⁰:

Պատրիարքական Աթոռների առաջնության խնդրին հետազայում անդրադառնում են նաև Ներսես Լամբրոնացին և Մխիթար Գոշը: Նրանց որդեգրած հայեցակետի մատենագրական առաջին վկայություններն առկա են արդեն Ժ դարում⁵¹: Հիմնվելով այդ սկզբնաղբյուրի վրա, ուր պատրիարքական չորս Աթոռները հավասար են և հիմնված են ըստ ավետարանիչների հերթականության, Ներսես Լամբրոնացին Հոռմի Աթոռի համար կատարում է մի էական հավելում: Բերենք ողջ բնագիրը.

⁴⁸ Տե՛ս մերընում, էջ 83:

⁴⁹ Ներսես Շնորհալի, Ողբ Եղեսիոյ, 1973, էջ 24:

⁵⁰ Թ.Ը., 1871, էջ 117: Այս հատվածում ընդգծված բառերը քաջ են թողել ՊԽՄ-ի բնագրի գրեթե թուր հրատարակությունները, հետևելով այդ գրքի առաջին՝ Սանկտսեբաստիոսյան հրատարակությանը (տե՛ս Գիրք որ կոչի Շնորհալեան, ՍՊԲ, 1788, էջ 110): Այդ մասին տե՛ս Բ. Ներսես Տէր Ներսեսեան, Մեր մախմուսը հաւատքը. Ս. Ներսես Շնորհալի եւ Պետրոս առաքել, Բազմավէպ, 1953, էջ 238-241, հմմտ. նաև Բ. Լևոն Զեքիան, Համամիութենական տրամախօսութիւն մը ԺԲ դարում, Բազմավէպ, 1977, էջ 820, ծան. 47: Իրականությունն այն է, որ լավագույն ձեռագրերն ունեն այս ըմբերումը:

Հրատարակությունների մեջ մախմուսական բնագրի հիշյալ հատվածը պահել են միայն այդ թղթի վեցնտիկյան հրատարակություններն ու լատիններեն թարգմանությունը: Այնուամենայնիվ, մեզ թվում է, որ գերաշնորհ սրբազան Բ. Ներսես Տէր Ներսիսեանը մեղմ ասած փոքր ի՞նչ չափազանցեցնում է (հետևելով Կապելետու հրատարակությանը), բացի վեցնտիկյանից այս երկի թուր հրատարակությունները համարելով կեղծված: Նման վերաբերումներ ՊԽՄ-ի մեծ մավերական բնագրին, չի կարող չանդրադառնալ հայերեն լեզվով պահպանված վավերագրերի մկատմամբ կասկածի ցողի ավելացմանը:

⁵¹ Տե՛ս Ա. Բողոյան, Հայոց եկեղեցին Տիեզերական ճիշդապետության աստիճանակարգում, «Գանձասար», թ. 6:

«Արդ առաջին աստիճան է լեկեղեցի դաս պատրիարգաց, որ թարգմանին առաջին հարք, այսինքն հայրապետք, և նստին նորա ընդ տինգերն ի չորս մայրաքաղաքաց չորս Աթոռն, ուր անտարամիչքն գրեցին զԱնտարաճն: Եւ վասն զի նախ Մատթէոս գրեաց յԱնտիոք, պատրիարգն Անտիոքոյ զնախապատուութիւն ունի քան զայլսն. իսկ յետ նորա Մարկոս յԱղեքսանդրիայ, յաջորդ նորա պատրիարգն յետ սորա դասակարգեցաւ. և Ղուկաս ի Հռոմ, որ Հռոմայն և՛ ըստ կարգի երրորդ էր պատուով, *թէպէտ և զօրութեամբ առաջին*. այլ Յովհաննէս հոսկ յետոյ յԵփեսոս գրեաց, որ նորայն եղև պատրիարգ. վերջին էր Աթողով քան գերիսն»⁵²:

Այս ձևակերպումներից իսկ արդեն երևում է, որ Ներսէս Լամբրոնացին, որը հայագիտության մի շարք երկերում անարդարացիորեն մարտնչող լատինասերի համբավ է ձեռք բերել, բավական հեռացել էր արդեն Հռոմի Աթոռի նկատմամբ Ներսէս Օճորհալու բավական հստակ դիրքորոշումից:

Իսկ ԺԳ դարում միարարության դեմ պայքարող հայ հոգևորականները բացահայտորեն պայքարում են Հռոմի Պապի առաջնության մասին տեսության դեմ: Այդ իմաստով շատ խոսում են Վարդան Արևելցու⁵³, Մխիթար Սկեռացու (Տաշրացու)⁵⁴ և ուրիշների մատենագրական ժառանգությունը, ուր արտահայտված է իրենց ժամանակաշրջանի Հայոց կաթողիկոսարանի և ավանդապահ հայ վարդապետների պաշտոնական կարծիքը: Հիմնականում այս դրույթի դեմ ծավալված պայքարում էր, որ Հայոց Եկեղեցին ԺԳ դարում գրեթե պառակտվեց:

բ) Պատարագի գինուն ջուր խառնելու հարցը. Ջրիստոնեական Եկեղեցու սրբագույն արարողություններից է Պատարագի խորհուրդը: Հայոց Եկեղեցու պատմական ավանդույթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայոց Եկեղեցում հնուց ի վեր ջուր չի խառնվել Պատարագի գինուն: Իհարկե կան նաև մի շարք պատմական վկայություններ, որ կոստանդնուպոլսի Եկեղեցու պարտադրմամբ, Պատարագի գինին երբեմն խառնվել է ջրով: Սակայն Հայոց Եկեղեցին, որն ավանդապահ Եկեղեցի լինելով, չէր կարող այդքան հեշտ հրաժարվել որդեգրած դարավոր ավանդույթից, որի ապացույցները նա տեսնում էր Աստվածաշնչում և Հայրաբանական գրականության մեջ, ինչպես նաև որոշ քույր Եկեղեցիների ծեսում, ընդունել էր այդ դարավոր ավանդույթը պաշտպանելու ուղին, քանի որ որդեգրել հակառակ դիրքորոշում, նշանակում էր բոլորին

⁵² Տե՛ս Արքայն Ներսէսի Լամբրոնացոյ Տարսնի եպիսկոպոսի խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցոյ եւ մեկնութիւն խորհրդոյ Պատարագին, Վեներտիկ, 1847, էջ 82:

⁵³ Գիրք թղթոց, 1901, էջ 503-509, հատկապես էջ 503-504:

⁵⁴ Տե՛ս Պատարագինք Մխիթարայ քահանայի Սկեռացոյ յաղագս համապատուութեան երկոտասան առաքելոց, Երուսաղէմ, 1865, հմմտ. նաև աշխարհաբար թարգմանությունը. Ա. Բոգոյան, Մխիթար վարդապետ Տաշրացի (Սկեռացի)՝ Հայոց եկեղեցու մուրապետական կառույցի պաշտպան, «Գանձասար», Ե (1994), էջ 137-157, Զ (1996), էջ 402-420:

ասել, որ իր դիրքորոշումը սխալ է եղել պատմական զարգացման ողջ ընթացքում, այն դեպքում, երբ իրեն այդ ավանդույթը պարտադրող եկեղեցական կազմակերպություններն էլ ավելի լուրջ հիմք չունեին Պատարագի գինուն ջուր խառնելու համար: Ոչ մի ավանդապահ եկեղեցի երբևէ չի համաձայնի որևէ նորամուծություն կատարել այդ արարողության մեջ: Մանավանդ այնպիսի մի եկեղեցի, ինչպիսին է Հայոցը, որի ակունքները ավանդաբար հասնում են մինչև առաքելական քարոզության շրջանին: Այնուամենայնիվ, սկսած Զ դարից բյուզանդական և Հայոց եկեղեցական փոխհարաբերություններում գայթակղության քար է դարձել Պատարագի գինու և Հացի խնդիրը: Իհարկե աշխարհիկ իշխանության ստիպումով մինչև ԺԲ դարը բյուզանդական օրթոդոքս եկեղեցուն հաջողվել է ստիպել Հայոց քարձր հոգևորական դասի որոշ ներկայացուցիչների Պատարագի գինուն ջուր խառնել, իսկ բաղարջի փոխարեն հաց օգտագործել: Սակայն Հայոց եկեղեցին սակավաթիվ այդ փորձերից հետո կրկին վերադարձել է իր սրբագործած հայրերի կողմից ավանդած սովորություններին:

Հետաքրքիր է, որ Իննուկենտիոս Բ-ը չի պահանջում բաղարջը փոխարինել հացով, քանի որ Հոռմի եկեղեցին ևս դարավոր ավանդույթ ունի Պատարագի ժամանակ բաղարջ օգտագործել: Այս փաստը գիտեր և Կոստանդնուպոլսի եկեղեցու դեմ պարտադրանքին նրբորեն հակադրվում է Ներսես Շնորհալին, Մանուել Կոմնենոսին ուղղված թղթերից մեկում գրելով. «գոր մեք և հոռմեացիք բաղարջ, և այլ եկեղեցիք՝ խմորում կատարեն, և իւրաքանչիւր ոք յիւրումն փութայ արդարամալ»⁵⁵:

Ինչ վերաբերում է գինուն ջուր խառնելու խնդրին՝ Հայոց եկեղեցին այնուհետև ևս շարունակեց իր ավանդույթը: ԺԴ դարում Սսի և Ադամայի ժողովի կապակցությամբ գրված ավանդապահ հայ հոգևորականներից մեկի այս հարցին վերաբերող նրկը ավանդությունը պահպանելու ուղենիշ հանդիսացավ⁵⁶:

գ) Քրիստոսի ծնունդը տօնելու օրվա խնդիրը. Այս հարցը ևս մախորդի նման դարեր ի վեր սնուցել է հայ և բյուզանդական եկեղեցիների հակամարտությունը և Հայոց եկեղեցին միշտ փաստարկներ է բերել իր որդեգրած ավանդույթի ճշմարտացիությունը ապացուցելու համար: Այս առումով էլ չափազանց հստակ և խոսուն են Ներսես Շնորհալու պատասխանները Մանուել Ա Կոմնենոսին հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների ընթացքում: Հոռմի եկեղեցին ևս, ինչպես վկայում են փաստերը, առաջ է քաշում այս մույն պահանջը, սակայն հետագայում ևս տեսնում ենք, որ Հայոց եկեղեցին ամուր է մնում իր ավանդույթը պաշտպանելու խնդրում:

⁵⁵ Տե՛ս Ա. Ա. Բոգոյան, ՊԲՀ, 1981, թ. 4, էջ 175:

⁵⁶ Այդ վավերագրի մասնակի հրապարակումը տե՛ս Ա. Տեր-Միքելեան, Սսի և Ադամայի իշխանաժողովը, Լուսայ, 1901, գիրք Ա, էջ 302-316:

Ինձնկենտրոն Գ-ի թուղթը մասնագետներին ավելի ամբողջական ներկայացնելու միտումով բերում էմ այն ըստ ՄՄ-1026 ձեռագրի, իսկ տողատակում տալիս էմ ՄՄ-500-ի տարրնթերցումները: Հույս ունեմ, որ պապական վավերագրերի ուսումնասիրողների օգնությամբ կգտնվի մասնակի լատիներեն բնագիրը: Պետք է ման գկատի ունեմալ, որ և՛ ՄՄ-1026, և՛ ՄՄ-500 մատյաններում բառավերջի «ա»-ից և «ո» հետո հաճախ «յ»-ն չի գրվում, «ոյ» խոնարհման բառերում հաճախ չի գրվում «ւ»-ը (օրինակ՝ եկեղեցի-եկեղեց[ւ]ոյ, գինի-գին[ւ]ոյ), «աւ»-ը հաճախ փոխարինվում է «օ»-ով, իսկ «եւ»-ը՝ «և»-ով: Նման տարրնթերցումները, ինչպես ման հավելագիր «ը»-ն չենք արտացոլել:

ՄՄ-1026, թղ. 221բ-231ա

:Հ Ե: Թուղթ՝ որ բերաւ ի Հոռմէ առ Գրիգորիոս կաթողիկոսն¹, որ մախ էր ի թուակ[ամին] :ԾԶ:

Ինձնկենտրոն եպիսկոպոս² ծառայ ծառայից՝ Աստուծոյ, պատուական եղբար մեր Գրիգորի կաթողիկոսի³ Հայոց եւ ամենայն եպիսկոպոսաց եւ քահանայից եւ սարկաւագաց եւ ամենայն Հայաստանեաց արանց եւ կանանց, որք հրամանաւ Աստուծոյ ընդ ձեռամբ ձերով են. ողջոյն եւ առաքելական առհնութիւն:

Լուս'ք զուղղափառ հաւատս ձեր ի գրոյս, զոր եքեր Աղայրի արքեպիսկոպոսս⁴ Աստուծոյ⁵, զոր իբրեւ ընթերցաք զոհութեամբ մեծաւ փառս մատուցաք Աստուծոյ, որ/(222ա) զձեզ հաստատում յուղղափառ հաւատ⁶ պահէ յայլագգեաց միջի: Նա եւ'ս առաւել ուրախութեամբ զոհացաք, զի զհաւատ եւ զկարգ եկեղեցոյս Հոռվմայ լիապէս ետես առ ձեզ, քանզի եւ ամենայն ոք որ գիտութիւն ունի սկիզբն հաւատոց եւ բարեկարգութեան զեկեղեցոյս Հոռմայ պահիցէ, զի թէպէտ եւ ընտրեցան ի Քրիստոսէ երկոտասանքն, սակայն Պետրոս զլուխ եւ առաջին կարգեցաւ ի միմեմէ առաքելոցն: Նոյնպէս եւ այս՝ որ աթոռ է մորին, վեհագոյն է ամենեցուն եւ վասն այնորիկ կոչեցաւ Կեփաս, զի հիմն եւ զլուխ է ամենայն հաւատոց: Եւ /(222բ) այս սուրբ եւ առաքելական եկեղեցիս մա'յր է ամենայն եկեղեցեաց Աստուծոյ եւ հաստատեալ է ուղղափառ հաւատով յառաքելոյն Պետրոսէ, որ եւ անշարժ եւ անխախտելի մնաց եկեղեցիս Հոռմայ մինչեւ ցայսար: Եւ հերձուած ո'չ եմուտ յեկեղեցիս յայս իշխանութեամբ եւ ո'չ մոլորումն յառաքելական ճանապարհէն, ա'յլ է ըստ որում եւ խոստացաւ տէր մեր Յիսուս Քրիստոս զխաւորի առաքելոյն Պետրոսի. «Սիմո՛ն, ահաւասիկ խնդրեաց սատանայ խարբալել զձեզ իբրեւ զցորեան, այլ եւ աղաչեցի զՀայր վասն քո, զի մի՛

¹ Կաթողիկոս:

² Եպիսկոպոս է:

³ Ընդգծված հատվածը ձեռագրում գրված է կարմիր թանաքով:

³ Կաթողիկոս:

⁴ Արքեպիսկոպոս:

⁵ Օտոյ:

⁶ Հաւատս:

պակասեցնեն հաւատք քո, // (223ա) այլ դու երբեմն դարձցիս եւ հաստատեցես զեղբարս քո»։ Նոյն հրամանս աստուածային անշարժ հաստատութեամբ մնաց ի վերայ այսր եկեղեցւոյ։ Եւ ի սմանէ հաստատի մետասան ազգաց եկեղեցեաց շարժումն եւ թերութիւն։ Եւ համապագ եկեղեցիս այս Քրիստոսի մանկադան հնձէ զամենայն որոմն եւ զվիռչ եւ պատրաստէ հոյն յաիտեմակամի։ Եւ վասն զի եկեղեցւոյս Հոռմայ տուա՞ պարգեւ ի Քրիստոսէ՝ հաստատել զամենայն խախտեալ եկեղեցիս, մոլորեալ եմ որոշեալքն ի սմանէ, որք ո՛չ գամ զկնի ի վարդապետութեան սորա։ Քանզի որպէս // (223բ) մարմին հնազանդի գլխոյ, մոյնպէս եւ ընթացոր եկեղեցի, որ է տաճար Քրիստոսի, հնազանդել պարտի սմա, որ գլխոյ եկեղեցւոյ հաստատեցաւ ի Քրիստոսէ։ Եւ զսոյն գրեաց սուրբ եւ մեծ եպիսկոպոսն Սելանոյ Ամբրոսիոս⁸ եւ երեւցոյց, թէ ամենեքեան իրաւացի է, զի հնազանդ լիցին կարգաց եկեղեցւոյս Հոռվմայ⁹։ Եւ այն¹⁰ աղագաւ հարկ եղեւ մեզ զայս յիշատակել, քանզի լուաք եթէ, որ Հայոց եկեղեցիդ է ի Քրիստոսի տնաւրէնութեան խորհրդոյն պատարագն ի սուրբ մարմին եւ արիւնն ընդ զինոյն ջուր ո՛չ խառնէք, եւ քանզի ամենայն հաւատացել // (224ա) ոց փրկութիւն հոգւոց եւ մարմնոց Քրիստոսի պատարագին խորհուրդն է։ Վշտանա՛մք, յորժամ ո՛չ տեսանեմք զորդիսդ յայսմ հաւրս ընթերցակիցս¹¹ եղեալ որպէս հայր, յորժամ տեսանէ զորդի ի կամաց իւրոց անհնազանդ եւ խրատէ զգաստանալ եւ դառնալ։ Նոյնպէս եւ եկեղեցիս Հոռվմայ¹² հայրական գթով տրտմեալ ընդ այս, աղաչէ զձեզ սգաստանալ¹³, զի թէ¹⁴ էք ի հնազանդութիւն առաքելական եկեղեցւոյս՝ պարտիք հրամանաց եւ սովորութեան, որ է ի սմա, հետեւել։ Այլ¹⁵ պա՛րտ է ձեզ հայել ի մետասան ազգս քրիս // (224բ) տոնէից, զի ամենեքեան ի սուրբ խորհուրդն ջուր արկանեն եւ զկարգ եւ զարիւնագորութիւն կաթողիկէ¹⁶ եկեղեցւոյս ըստ այսմ պահեն։ Արդ՝ եթէ դուք որպէս եւ գրեալ էք հնազանդէք այսմ աթոռոյ, պարտիք եւ զայս ուղղել զհետ մերում կարգիս, քանզի վասն այսր խորհրդոյ սուրբն Աղեկսանդրոս հայրապետն Հոռմայ, որ հինգերորդդ¹⁷ էր ի սրբոյն Պետրոսէ, ա՛յսպէս գրեաց. «պա՛րտ է, ասէ, ամենայն քահանայապետի զխորհրդական գործ եկեղեցւոյ ուսուցանել, ա՛յսինքն՝ զմկրտութիւն, զպսակ եւ զպատարագ, որ է // (225ա) խորհրդական չարչարանացն Քրիստոսի յիշատակ։ Զի որպէս Քրիստոս պատարագեցաւ ի խաչին մարմնով, եւ արիւն եւ ջուր ել ի կողէն, զնոյն խորհրդոյ յիշատակ պարտիմք կատարել՝ եւ մարմին եւ արիւն եւ ջուր պատարագել»։ Զայս հրամայեաց սուրբն Աղեկսանդրոս՝ մեծն եւ

⁷ Սովա։

⁸ Ամբրոսիոս։

⁹ Հոռմա։

¹⁰ Այնր։

¹¹ Ընթացակիցս։

¹² Հոռմա։

¹³ Զգաստանալ։

¹⁴ Եթէ։

¹⁵ Այլն։

¹⁶ Կաթողիկէ։

¹⁷ Հինգերորդ։

փառատրեալ վկայն, որ զամենայն կանոնս եւ զհաստատութիւն լիապէս ունէր ի սրբոյն Պետրոսէ եւ եցոյց եթէ. արժան է ո՛չ արեամբ միայն ապտարագել եւ ո՛չ ջրով միայն, այլ մարմնով՝ արեամբ եւ ջրով: Քանզի զսոյն լուաք եւ ուսաք ի սուրբ Աւետարանէն, զի յորժամ //(225բ) խոցեցին զկողմ Տեառն՝ ոչ ջուր միայն ել եւ կամ արիւն միայն, այլ՝ արիւն եւ ջուր: Նաեւ միւս հայրապետն սուրբն Յովնոս այսպէս ասէ. ո՛չ է պարտ քաժակին լինել արեամբ միայն, եւ ո՛չ ջրով միայն, այլ՝ երկոքումքն՝ ա՛յսինքն արեամբ եւ ջրով: Եւ դարձեալ գրէ սուրբն Յովնոս եթէ. «ոք զխորհրդականն նուէրսն միովն կատարէ առանց միւսոյն, դադարել պարտի մինչեւ ի զոջումն եկեսցէ եւ ապաշխարեսցէ, ըստ եկեղեցոյ կանոնադրութեանց»: Եւ Կիպրիանոս մեծ վկայն¹⁸՝ Եպիսկոպոսն¹⁹ Կարքեդոնոյ, որ յարեմուտս, յիշատակ վասն քաժակի Տեառն մերոյ Յիսուսի //(226ա) Քրիստոս²⁰, այսպէս խաւսեցաւ Հոգին սուրբ քերամովն Սողոմոնի եւ ասաց. «Իմաստութիւն շինեաց իւր տուն եւ կանգնեա՛ց սիւնս եւթն: Զե՛ն²¹ զեմլիս²² իւր եւ խառնեաց ի խառնելիս զգինի իւր եւ պատրաստեաց զսեղան իւր եւ առաքեաց զծառայս իւր՝ կոչել քարձր քարոզութեամբ ի խառնելիս իւր, եւ ասէ. որ ոք իցէ անգգամ եկեսցէ առ իս, եւ ցալկասամիտսն ասէ «եկաք կերայք ի հացէ իմմէ եւ արբէք զգինի զոր խառնեցի ձեզ»: Այս մարգարէութիւն Սողոմոնի նշակեաց²³ զփրկական խորհրդդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ խառնեաց ի խաչին եւ ետ ի հաւատացելոցս զ//(226բ) նոյն: Եւ այսու ցուցանէ երանելիս Կիպրիանոս²⁴, թէ. ո՛չ է արեւն ջրով միայն աւանդել զխորհրդդ եւ ո՛չ արեամբ լոկով, այլ՝ արեամբ եւ ջրով: Ա՛յսպիսի սրբոց հարցս վկայութեանց երեւի թէ. որ աւանդէ զխորհրդդ տէրունական զինով միայն, քաժանի՝ ի հաւատացելոց Քրիստոսի ժողովոյ, եւ որ ջրով միայն՝ առանց Քրիստոսի է համարեալ խորհրդոյն կատարումն: Քանզի եւ խառնումն քանին Աստուծոյ ընդ մեզ այսու երեւի, զի խառնումն արդարեւ եղեւ աստուածութեանն ընդ մեզ, որոյ²⁵ եղաք անդամք եւ կոչեցաւ նա մեզ զլուխ: //(227ա) Եւ ըստ այսմ զխորհրդդ խաչին ի վերայ սրբոյ սեղանոյն կատարեալ առնումք հաւատացեալքս եւ խառնիմք ընդ Քրիստոս, որպէս եւ գրեաց երանելին Ամբրոսիոս. Դարձեալ որպէս յիշեցուցաք ձեզ վկայութեամբ սուրբ հայրապետացն վասն խառնման արեանն եւ ջրոյն, որ ի խաչին ցուցան, ծանուցանեմք եւ վասն տաւնի ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որպէս գրեցին սուրբ հարքն առաջինք: Եւ զայս, ուսեալք ի սրբոց առաքելոցն եւ հասուցին մինչեւ առ մեզ, քանզի լուաք. թէ դուք ազգքդ²⁶ Հայոց, ո՛չ տաւնէք զտաւն ծնընդեանն Քրիստոսի զկմի մե՛ //(227բ) տասան ազգաց, եւ պա՛րտ է ձեզ

18 վկայն+և+:

19 Եպիսկոպոս:

20 Քրիստոսի:

21 Զե՛ն:

22 Զգեմլիս:

23 Նշանակեաց:

24 Կիպրիանոս:

25 Որոյ+և+:

26 Ազգդ:

յիշեցուցանել մեզ, եթե զի՞մչ պատճառաւ զատեալ որոշիք ի մետասան ազգացս, քանզի երանելի Քայրապետն Յոհաննէս Ոսկեքերանն, ի ճառ ծննդեանն գրէ. թէ ա՛յս արք ծնաւ Քրիստոս, երեւցուցեալ զտաւն ծննդեանն որիշ եւ զտաւն սրբոյ մկրտութեանն յա՛յլ արք: Վկայէ եւ տաւն ի ծննդեանն Տեառն արեգականն շրջագայութիւնն, քանզի յամսեանն, յորում արք ծննդեանն է, դարձ արեգականն է՝ տիւն սկսանի յաճել եւ զիշերն՝ ի պակասել, իսկ ի ծննդեանն Յովաննոս, որ վեց ամսով յառաջ է // (228ա) քան²⁷ գՔրիստոսի²⁸, սկիզբն առնուն աւուրքն ի նուազել եւ զիշերն ի յաճել: Վասն զի եւ Յովաննէս քարոզէր ժողովրդեանն. նմա պարտ է աճել եւ ինձ մեղմանալ: Եւ զնոյնս գրեաց երանելիմ Յոհաննէս Ոսկեքերանն ի ճառիմ, յորում մեկնէ զյղութիւնն Եղիսաբէթի մարն Յոհաննոս²⁹ եւ ասէ. եղեալ զնոյնն յամսեանն³⁰ Սեպտեմբերի ի քսան եւ երեքն, յորում ամսեան Քաւասարի տիւն եւ զիշերն, եւ տիւն սկսանի ի պակասել եւ զիշերն յաճել: Արդ վասն տաւնի ծննդեանն Քրիստոսի քաւական Քամարիմք այսքան վկայութիւնքս³¹, զորս ի Սուրբ Գ// (228բ) րոց ածաք ձեզ: Եւ երկրորդեմք դարձեալ եւ ծանուցանեմք ձեր սուրբ եղբայրութեանդ, եթէ ամենեւին արժան է ի խորհուրդ սուրբ³² պատարագիմ Քրիստոսի զջուրն խառնել, այլ եւ աղաչեմք լսել մեզ եւ յայս խորհուրդ Քաւասարել մեզ, որով եւ յայտնի ձեր սէրդ եւ միաբանութիւնդ ընդ սուրբ եկեղեցիս եւ ընդ մեզ: Քանզի եթէ կաթողիկէ³³ եկեղեցիս այս մայր է ձեզ եւ գլուխ, արժան է կամանց մարս Քաւանել եւ առնել: Եւ կամք սորա ա՛յս են. ի տաւն ծննդեանն եւ ի խորհուրդ պատարագիմ ընթացակից լինել իւր եւ ո՛չ ի մայրեմի ճանապարհ// (229ա) Քէս ստեղծուել եւ ո՛չ ի գլխոյ աստի անդամոցդ ատարանալ: Եւ զայս ի սոյնս աւարտեցաք:

Դարձեալ յիշեցուցանեմք ձեզ եւ աղաչեմք, զի բնակելով ի սահմանս Քեթանոսաց պարտիք լուսաւոր երեւել ի մէջ դոցա եւ տալ լոյս գիտութեան խաւարելոցդ, որպէս արեգակն եւ լուսին եւ աստեղք, որք պայծառացուցանեն զնսնմութիւն երկնի եւ երկրի: Վասն զի եթէ բնակի սուրբ այր եւ ուղղափառ, ի Քաւասարապատիւ սրբոցն միջի եւ ուղղափառաց, անյա՛յտ մնա նորիմ քարի վարքն գովասանողաց, այլ՝ մեծարի եւ գովի այն, // (229բ) որ ի խաւարելոց միջի զնշոյլ վարդոց իւրոց եւ Քաւաստոց փայլեցուցանէ:

Զնոյնս պատմէր եւ երանելիմ Յոր³⁴ եթէ. եղբայր եղէ վիշապաց եւ ընկեր ջայլեմանց: Գովի՝ եւ Ղովտ ի սուրբ առաքելոյն Պետրոսէ եւ յամենայն սրբոց, որ բնակեալ գոյով ի մէջ սողոմայեցոցն եւ հաճոյացաւ Աստուծոյ, զոր վասն բարեգործութեան իւրոյ հրեշտակքն առաքեալք հանին ի կործանմանէն: Այլ եւ խաւսեցաւ Հոգին սուրբ վասն եկեղեցոյն

27 շիք. քան:

28 Քրիստոսիմ:

29 Յովաննոս:

30 շիք. յամսեանն:

31 Զվկայութիւնքս:

32 Սուրբ խորհուրդ:

33 Կաթողիկէ:

34 Յովս:

Պերգամոյնի Յայտնություններ³⁵ Յովհաննու. ճամաչեմ զքեզ թէ ո՞ր իցես յաթոռն սատանայի // (230ա) մտնել, եւ ունիս զամուսն իմ եւ ո՛չ ուրախացար³⁶ զիս: Եւ Սողոմոն յիշատակէ յերգ երգոցն զգովութիւն փեսային, զոր տայ հարսիցն՝ որ է եկեղեցի, եւ ասէ. որպէս շուշան ի մէջ փշոց, այնպէս մերձաւորդ իմ ի մէջ դատերաց: Այլ եղբայրս մեր Աղաբի ոչ կարաց զքովամդակն պատմել վասն կեանաց ձեր եւ քաղաքաւարութեան եւ յաղագս ա՛յլ քրիստոնէիցդ, որք են յարեւելս: Եւ ցանկամք լսել ի ճշմարիտ եւ ի սղորք մարդկացէ, վասն այսր եւ խնդրեմք յԱստուծոյ եւ ի ձեր սրբութենէդ. զաստուածահաճոյ սուրբ եպիսկոպոսդ՝ զհարազատ եղբայր ձեր զՆերսէս եւ թարգման// (230բ) ճարտար՝ հմուտ Հայոց լեզուի եւ Հատինացոց, պատշաճ համարել եւ յղել ի սուրբ տեղիս յայս, զոր ամենայն յաւժարութեամբ ցանկամք տեսանել եւ լնուլ նովաւ զփափագ³⁷ սրտի մերում: Եւ ահա սպասեմք պատասխանատւութեանն եւ Ներսէսի եպիսկոպոսի եղբաւր ձեր տեսութեանն: Ապա թէ վասն ճամապարհիդ երկայնութեան երկնչիք. զա՛յլ ոք ի գիտնական³⁸ ձերոց կլերիկոսաց³⁹ առաքեցէք եւ թարգման: Եւ աւրհմութիւն Հաւր եւ Որդոյն մորա Յիսուսի Բրիստոսի եւ Հոգւոյն սրբոյ եղիցի ընդ ձեզ յայսմհետէ մինչեւ յաւիտեան⁴⁰, ամէն:

Գրեցաւ ի Հոռոմ ի յադրանն մախ// (231ա) քան զեղծն կաղամդաց հոկտեմբեր⁴¹ ամսոյ:

³⁵ Զիք. վասն եկեղեցւոյն Պերգամոյն

ի յայտնություններ:

³⁶ Ուրացար:

³⁷ Զփափագ:

³⁸ Գիտնականաց:

³⁹ Կլերիկոսաց:

⁴⁰ Յաւիտեանս:

⁴¹ Հոգտեմբեր: